ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ռազմավարական Էկոլոգիական Գնահատման Արձանագրություն

Փաստեր և Առավելություններ

EaPGREEN Partnership for Environment and Growth

This project is funded by the EU

UNECE

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս հրատարակությունը պատրաստվել է «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EaP GREEN) ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ ԵՏՀ անդրսահմանային համատեքստում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Կոնվենցիայի» (Էսպո Կոնվենցիա) Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության քարտուղարության կողմից և ZOI բնապահպանական ցանցի հետ համագործակցության միջոցով: EaP GREEN ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում չորս գործընկերների կողմից՝ OECD, UNECE, UNEP և UNIDO:

EaP GREEN ծրագրի հիմնական նպատակն է աջակցել ԵՄ Արևելյան գործընկերության վեց երկրներին՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա, տնտեսական աճն առանձնացնել էկոլոգիական դեգրադացիայից և ռեսուրսների կորստից: Մասնավորապես EaP GREEN ծրագիրը նպատակ ունի՝

- Ազգային զարգացման ծրագրեր ներառել կայուն սպառման և արտադրության մոդելներ, ապագա օրենսդրություն և օրենսդրական համակարգեր՝ նպատակ ունենալով հետագա քաղաքականության զարգացման համար ապահովել տարածաշրջանային, միջազգային համաձայնագրերին և գործընթացներին, ինչպես նաև համապատասխան ոլորտներին բնորոշ, ԵՄ օրենսդրական ակտերին համապատասխան իրավական ամուր հիմք:
- Նպաստել Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) համակարգերի՝ որպես էկոլոգիապես կայուն տնտեսական զարգացման պլանավորման կարևոր գործիքների ներդրմանը:
- Ապահովել անցումը դեպի կանաչ տնտեսություն՝ որոշակի տնտեսական ոլորտներում կայուն սպառման և արտադրության պրակտիկայի ընդունման միջոցով (արտադրության, գյուղատնտեսության, սննդի արտադրության և վերամշակման, շինարարության):

EaP GREEN ծրագիրը կազմված է երեք բաղադրիչից՝

- Կառավարման և ֆինանսավորման գործիքներ:
- ՌԷԳ և ՇՄԱԳ՝ կայուն սպառման և արտադրության քաղաքականության իրականացման հետ մեկտեղ:
- Ցուցադրական ծրագրեր:

EaP GREEN ծրագիրն աջակցում է գործընկեր երկրներին՝ Վարշավայում կայացած Արևելյան գործընկերության գագաթնաժողովի համատեղ հայտարարության մեջ և Աստանայում (2011 թ. սեպտեմբեր) անցկացված «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» յոթերորդ նախարարական համաժողովի հռչակագրում նշված կանաչ տնտեսության անցմանն ուղղված պարտավորությունների կատարմանը: Դրա նպատակները համահունչ են« Ռիո +20» գագաթնաժողովի արդյունքների մասին համաձայնեցված տեսլականին:

EaP GREEN ծրագրի շրջանակներում ՄԱԿ ԵՏՀ աջակցությունը կենտրոնանում է երեք հիմնական ուղղությունների վրա՝

1. Ներկայիս ազգային կանոնադրական և օրենսդրական դաշտերի վերանայում, ներառյալ ՌԷԳ, համապատասխան դեպքերում նաև ՇՄԱԳ, օրենսդրական վերանայումները և ՌԷԳ վերաբերյալ օրենսդրության և ենթատարածաշրջանային իրավական ակնարկների մշակում:
2. ՌԷԳ/ՇՄԱԳ ընթացակարգերի կարողությունների զարգացում, ներառյալ ՌԷԳ վերաբերյալ ազգային և ենթատարածաշրջանային վերապատրաստումներ և աշխատաժողովներ, ազգային ուղեցույցների մշակում, համակարգող և փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումներ, ՌԷԳ փորձնական նախագծեր:
3. Վարչական կարողությունների ուժեղացում վերոնշյալ օրենսդրական վերանայումների, վերապատրաստումների, փորձնական ծրագրերի և քաղաքական երկխոսության խթանման միջոցով:

Համապատասխան գործողությունները կապված են ՄԱԿ ԵՏՀ Էսպո Կոնվենցիայի ներքո գործող աշխատանքային պլանի հետ և նպաստում են ՌԷԳ արձանագրության վավերացմանն ու իրագործմանը:

Գրաֆիկա՝ Քերոլայն Դանիել, Յորուն Վիլե, Աննա Պապանաստասիո («Zoi» բնապահպանական ցանց)
Հայեցակարգ՝ Ելենա Սանթեր (ՄԱԿ ԵՏՀ)
Տեքստ՝ Ելենա Սանթեր (ՄԱԿ ԵՏՀ), Մարտին Սմութնի («Integra Consulting» ՍՊԸ), Օկսանա Յակովենկո («Zoi» բնապահպանական ցանց), Քրիստինա Շտուլբերգեր («Zoi» բնապահպանական ցանց)
Ծրագրի համակարգող՝ Քրիստինա Շտուլբերգեր («Zoi» բնապահպանական ցանց)
Ծրագրի ղեկավար՝ Տեա Առլավուո (ՄԱԿ ԵՏՀ), Էսպո Կոնվենցիայի և ՌԷԳ արձանագրության քարտուղար
Հրատարակության աշխատանքներին մասնակցեցին նաև՝ Աֆրոդիտա Սմադադի (ՄԱԿ ԵՏՀ), Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու («Ecoline» միջազգային ՍՊԸ), Դմիտրի Սկրիլնիկով (ՄԱԿ ԵՏՀ խորհրդատու), Իրժի Դուսիկ («Integra Consulting» ՍՊԸ)

ՊԱՆՈՒՅՈՒՄ

Այս/Սույն հրատարակության բովանդակությունը պարտադիր չէ, որ արտացոլի ՄԱԿ ԵՏՀ, Եվրոպական Միության կամ ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված մյուս մասնակիցների պաշտոնական դիրքորոշումը:

ՄԱԿ ԵՏՀ-ն և EaP GREEN ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված մյուս մասնակիցները այս հրատարակության մեջ պարունակվող տեղեկատվության հնարավոր օգտագործման դեպքում պատասխանատվություն չեն կրում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

01 Ի՞ՆՉ Է ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 3

02 Ի՞ՆՉ Է ՄԱԿ ԵՏՀ ՌԷԳ-Ի ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 4

03 Ե՞ՐԲ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՌԷԳ-Ը 6

04 ԻՆՉՊԻՍԻ՞ ՆԱԽԱԳԾԵՐ, ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՌԷԳ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 8

05 ՄԱԿ ԵՏՀ ՌԷԳ-Ի ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՌԷԳ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ 10

06 ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՌԷԳ ՕԳՈՒՏՆԵՐԸ 12

07 ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՆԱԼ ՌԷԳ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ 26

ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքույկը պատրաստվել է «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EaP GREEN) ծրագրի ֆինանսավորմամբ՝ ՄԱԿ ԵՏՀ Անդրսահմանային համատեքստում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Կոնվենցիայի (Էսպո Կոնվենցիա) Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության քարտուղարության կողմից՝ ի պատասխան Բյուրոյի խնդրանքին մշակելու ՌԷԳ-ի օգուտների վերաբերյալ մի նյութ, որը կնպաստի կառավարությունների, հանրության և այլ շահագրգիռ կողմերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և կաջակցի Արձանագրության վավերացմանն և իրականացմանը:

Գրքույկը հասցեագրված է ազգային ՌԷԳ համակարգերի ստեղծման գործընթացում և /կամ դրա համակարգված օգտագործման գաղափարի առաջխաղացումն իրականացնող երկրներին, դրանց իշխանություններին, հանրությանը և այլ շահագրգիռ կողմերի: Այն աջակցում է երկրներին ՌԷԳ Արձանագրությանը միանալու նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու գործում:

Գրքույկը ներկայացնում է ՌԷԳ Արձանագրությամբ սահմանված ՌԷԳ ընթացակարգը՝ հղում կատարելով դրա դրույթներին, ինչպես նաև ՌԷԳ օգուտները՝ պարզաբանելով դրանց վերաբերյալ սխալ պատկերացումները: Այն նաև տրամադրում է հիմնարար տեղեկություն ՌԷԳ ծագման վերաբերյալ, ինչպես նաև դրա իրականացման գործնական օրինակներ: Ի վերջո, այն ներկայացնում է քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն Արձանագրությանը միանալու մտադրություն ունեցող կառավարությունների կողմից:

01 ԻՆՉ Է ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Կառավարությունները ձևավորում են համայնքների ապագան՝ մշակելով զարգացման ռազմավարություններ ազգերի և տարածքների համար: Կառավարական այս նախագծերն ու ծրագրերը, ինչպես նաև ընդունված քաղաքականություններն ու օրենսդրությունը հիմք են այնպիսի ոլորտների համար, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, էներգետիկան, արդյունաբերությունը, տրանսպորտը, տարածաշրջանային զարգացումը, հողօգտագործումը, թափոնների կամ ջրերի կառավարումն իրականացնող ծրագրեր մշակելիս և որոշումների ընդունելիս: Այս ռազմավարական փաստաթղթերը մեծ ազդեցություն ունեն ապագայում կայացվող որոշումների վրա, որոնք իրենց հերթին ներգործում են մարդկանց կյանքի վրա: Շատ կարևոր է, որ բնապահպանական և առողջապահական նկատառումներն ընդգրկված լինեն որոշումների կայացման գործոնների շարքում: Դա ապահովելու համար շատ երկրներ կիրառում են համակարգային և կանխատեսելի պլանավորման գործիք, որը կոչվում է Ռազմավարական էկոլոգիական գնահատում /ՌԷԳ/:

ՌԷԳ-ը քայլ առ քայլ ընթացակարգ է, որը վերլուծում և համակարգում է կառավարության կողմից մշակված զարգացման ռազմավարությունների, ծրագրերի և նախագծերի հետ առնչություն ունեցող բնապահպանական և առողջապահական նկատառումներ: Այս նկատառումները հավաքագրվում են համապատասխան մարմինների և հանրության հետ խորհրդակցությունների արդյունքում, որպեսզի որոշում կայացնողները հնարավորություն ունենան համեմատելու նախագծման յուրաքանչյուր տարբերակի առավելություններն ու թերությունները: Այսպիսով, ՌԷԳ-ը բարելավում է որոշումների կայացման թափանցիկությունը և բարձրացնում հասարակական վստահության աստիճանն այդ գործընթացի նկատմամբ: Ի վերջո, ՌԷԳ-ը գործիք է, որի միջոցով կառավարությունն ապահովում է առողջ տնտեսական զարգացման այնպիսի տարբերակների ընտրություն, որոնք նպաստում են նաև մարդու առողջությանը և շրջակա միջավայրին:

ՌԷԳ սահմանումը
ՄԱԿ ԵՏՀ ՌԷԳ-ի մասին արձանագրությունը բնապահպանական էկոլոգիական գնահատումը սահմանում է որպես «բնապահպանական, ներառյալ առողջապահական ազդեցության գնահատում, որը ներառում է բնապահպանական հաշվետվության շրջանակի որոշումը և դրա նախապատրաստումը, հանրային մասնակցության ապահովումը և խորհրդակցությունների անցկացումը, միևնույն ժամանակ նախագծում կամ ծրագրում հաշվի են առնվում այդ հաշվետվությունը, հանրային մասնակցության և խորհրդակցությունների արդյունքները» (Հոդված 2.6):

02 ԻՆՉ Է ՄԱԿ ԵՏՀ ՌԷԳ-Ի ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌԷԳ-ի մասին Արձանագրությունը միջազգային պայմանագիր է, որը կողմ հանդիսացող երկրներին տրամադրում է իրավական պարտավորություններ և ընթացակարգային հիմք՝ ՌԷԳ իրականացնելու համար: Արձանագրությունը բաց է ՄԱԿ-ի անդամ-երկրների համար: Այն ձևակերպում է ՌԷԳ իրականացման պահանջները, այդ թվում՝ ընթացակարգային կամ մեթոդաբանական: Ուղեցույցները, ինչպես օրինակ՝ «Ռեսուրսների ձեռնարկը, որը սատարում է ՌԷԳ-ի վերաբերյալ Արձանագրության կիրառմանը» (2011) և «Ռեսուրսների պարզեցված ձեռնարկը» (2012) տրամադրում են ՌԷԳ իրականացման համար օգտակար նյութեր:

Արձանագրությունը քննարկվել է 1991 թ. ՄԱԿ ԵՏՀ Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Կոնվենցիայի (Էսպո Կոնվենցիա) ներքո՝ Կոնվենցիայի շրջանակներն ընդլայնելու նպատակով, բայց այն առանձին իրավական գործիք է: Սա նշանակում է, որ երկիրը կարող է միանալ Արձանագրությանը՝ Կոնվենցիայի կողմ չհանդիսանալով: Ավելին, ի տարբերություն Կոնվենցիայի, որը վերաբերում է միայն առաջարկվող գործողություններին, որոնք, ամենայն հավանականությամբ, կարող են զգալի ազդեցություն ունենալ ազգային սահմանների վրա, Արձանագրությունը վերաբերում է հիմնականում ներքին ծրագրերին և նախագծերին: Հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում Արձանագրությունը նախատեսում է նաև անդրսահմանային խորհրդատվություններ (Հոդված 10):



Արձանագրությունը նման է ՌԷԳ-ի վերաբերյալ Եվրոպական միության դիրեկտիվին, սակայն որոշակի առանձնահատկություններով, օրինակ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունից բացի, հատուկ ուշադրություն է դարձվում մարդկանց առողջության վրա ազդեցությանը: Արձանագրության բանակցությունների ընթացքում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությանը և շրջակա միջավայրի հարցերում արդարադատության մատչելիության մասին ՄԱԿ ԵՏՀ Կոնվենցիայի (Օրհուսի Կոնվենցիա) շուրջ խորհրդակցությունների արդյունք են հանրության լայն մասնակցության վերաբերյալ Արձանագրության դրույթները: Արձանագրությունը քաղաքականության և օրենսդրության գնահատման համար սահմանում է ոչ պարտադիր շրջանակ:

Արձանագրության Կողմերկրներնայնդիտումեն,որպեսկայունզարգացմանհիմնական գործիք: Դրա իրագործումը կաջակցի երկրներին հասնել կայուն զարգացման նպատակներին և դրանց թիրախներին, ինչպես սահմանված է 2030 թվականի կայուն զարգացման օրակարգում, որն ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարին և առաջիկա 15 տարիների ընթացքում ուղեցույց է հանդիսանալու Միավորված ազգերի կազմակերպության անդամ-պետությունների կառավարությունների համար որոշումների ընդունման գործընթացում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

ՌԷԳ Արձանագրությունը՝

- Ընդունվել է 2003թ. Կիևում
- Ուժի մեջ է մտել 2010թ.
- Բաց է ՄԱԿ բոլոր անդամ -պետությունների համար
- Ունի 28 կողմ (2016թ. մարտի 30-ի դրությամբ)

ՌԷԳ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ



03 Ե՞ՐԲ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՌԷԳ-Ը

Անհատական ծրագրի համար իրականացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) համեմատ, ՌԷԳ-ն ավելի վաղ է ներգրավվում որոշումների ընդունման գործընթաց: Դա թույլ է տալիս ՌԷԳ-ին կանխել ոչ ճիշտ պլանավորման արդյունքում առաջացած անդառնալի հետևանքները և մեծ ծախսերը: ՌԷԳ-ը կիրառվում է նաև նախագծման և ծրագրերի մշակման փուլում, երբ սահմանվում են ապագա ծրագրերի շրջանակները, դրա ՇՄԱԳ և պոտենցիալ այլ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործողությունների ենթակա լինելը: Էկոլոգիական շահավետության ՌԷԳ ներուժն ավելի բարձր է, քան ՇՄԱԳ-ինը, օրինակ՝ ճանապարհի կառուցման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման փոխարեն ավելի արդյունավետ կլինի մշակել տրանսպորտային կայուն քաղաքականություն:



Գործնական առումով ՌԷԳ ընթացակարգերը պետք է նախաձեռնել նախագծի կամ ծրագրի մշակման գործընթացի հետ միասին (կամ մի փոքր ուշացումով): Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում ՌԷԳ արդյունքները ներդնելու նախագծի կամ ծրագրի մեջ դրա նախապատրաստական աշխատանքների ընթացքում, դրանով իսկ ապահովելով ՌԷԳ արդյունքները ռազմավարական փաստաթղթի ընդունման ժամանակ, անգամ դրա ընդունումից առաջ պատշաճ դիտարկումը:

ՌԷԳ-Ի ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՌԷԳ-ը՝ որպես ազգային և տեղական մակարդակներում ռազմավարական նախագծերի պլանավորման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սկզբունքների ամբողջություն, մեծապես զարգացել է:

ՇՄԱԳ-ը ներդրվել է 1960-ականների վերջին Միացյալ Նահանգներում որպես նախատեսված արդյունաբերական գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների կանխատեսման, այդ գործունեության բացասական ազդեցությունների մեղմացման հնարավորությունների բացահայտման, ինչպես նաև այդ գործունեության դրական ազդեցությունների ընդլայնման գործիք: 1970-1980-ական թվականներին ՇՄԱԳ ավելի հաճախ սկսեցին օգտագործել բազմաթիվ երկրներում: 1980-ական թվականների կեսերին ՇՄԱԳ-ը լայնորեն տարածվեց ամբողջ Եվրոպայով: Եվրոպական միության երկրներն ընդունեցին Եվրոպական հանձնաժողովի ՇՄԱԳ դիրեկտիվը (85/337/EEC), իսկ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները մշակեցին իրենց համար հատուկ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական էկոլոգիական փորձաքննության սխեմաներ: Վաղ 1990-ական թվականներին նման ՇՄԱԳ գործընթացներ կիրառվեցին ՄԱԿ ԵՏՀ բոլոր երկրներում: Պետական սահմաններից դուրս ծավալվող նախագծերի բնապահպանական նկատառումները բավարարելու նպատակով ՄԱԿ ԵՏՀ հովանու ներքո գտնվող երկրները մշակեցին անդրսահմանային համատեքստում ՇՄԱԳ իրականացման համար Կոնվենցիան կամ Էսպո Կոնվենցիան: Կոնվենցիան ստորագրվել է 1991 թվականին Ֆինլանդիայի Էսպո քաղաքում և ուժի մեջ է մտել 1997 թվականին: 2016 թվականին արդեն Կոնվենցիան վավերացրել է 45 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միությունը:

1970-ական թվականների վերջին և 1980-ական թվականների սկզբին կառավարությունները որոշակի թերություններ են արձանագրել ծրագրային մակարդակով իրականացվող ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրը պաշտպանելու սխեմաների կարողություններում, քանի որ որոշումները, որոնց արդյունքում չհաջողվեց կանխարգելել (կամ առաջացան) շրջակա միջավայրի վրա բացասական հետևանքները, ընդունվել էին ավելի վաղ՝ քաղաքականության կամ ռազմավարության մշակման փուլում, մինչդեռ համեմատաբար նեղ աշխարհագրական տարածքում ՇՄԱԳ-ը կարող է ունենալ սահմանափակ ազդեցություն: Դա հանգեցրեց ՌԷԳ հայեցակարգի մշակմանը՝ հիմնվելով տարածաշրջանային և տարածքային պլանավորման մեջ կիրառվող մոտեցումների վրա:

1990-ական թվականների սկզբին ՌԷԳ դրույթներն արդեն ներառվել էին Կանադայի, Չեխիայի, Դանիայի, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների գործող ազգային իրավական դաշտ: Նրանք ՌԷԳ պարտավորությունները ներառեցին «կայունության գնահատման» շրջանակներ: 2001 թվականին Եվրոպական հանձնաժողովն ընդունեց Շրջակա միջավայրի վրա որոշակի ծրագրերի և նախագծերի ունեցած ազդեցությունների գնահատման եվրոպական դիրեկտիվը (2001/42/EC), այսպես կոչված ՌԷԳ դիրեկտիվը: Այդ պահին Եվրոպական միության անդամ -երկրները ՌԷԳ դիրեկտիվը պետք է ընդգրկեին իրենց օրենսդրություն մինչև 2004 թվականը:

Ոգեշնչված «Շրջակա միջավայր և զարգացում» ՄԱԿ-ի կոնֆերանսով (Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա, 1992), մասնավորապես Ռիոյի հռչակագրի 4-րդ և 10-րդ սկզբունքներով և 21-րդ օրակարգով, ինչպես նաև «Շրջակա միջավայրի և առողջության» երրորդ նախարարական կոնֆերանսի արդյունքով (Լոնդոն, 1999) և Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովով (Յոհանեսբուրգ, Հարավային Աֆրիկա, 2002 թ.)՝ ներդրվեց ՌԷԳ միջազգային իրավական շրջանակը: Հետևաբար, Էսպո Կոնվենցիան լրացվեց ՌԷԳ-ի վերաբերյալ ՄԱԿ ԵՏՀ արձանագրությամբ, որը ստորագրվել էր 2003 թ. մայիսին Կիևում (Ուկրաինա) 38 երկրի կողմից, այդ թվում՝ Եվրոպական միության: ՌԷԳ արձանագրությունն ուժի մեջ մտավ 2010 թ.:

04 ԻՆՉՊԻՍԻ՞ ՆԱԽԱԳԾԵՐ, ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՌԷԳ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Արձանագրության համաձայն՝ ՌԷԳ-ը պարտադիր է կառավարության ծրագրերի և նախագծերի համար (հոդված 2.5) և պետք է կիրառվի տնտեսության 13 ոլորտներում, երբ սահմանվում է զարգացման որոշակի ծրագրերի և նախագծերի բովանդակության շրջանակը, և դրանց իրականացման համար, ըստ ազգային օրենսդրության, անհրաժեշտ է կիրառել ԾՄԱԳ (հոդված 4.2):

Այլ տնտեսական ոլորտներում իրականացվող ծրագրերի և նախագծերի, տեղական մակարդակում փոքր տարածքների օգտագործումը որոշող ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև աննշան փոփոխությունների դեպքում ՌԷԳ-ը չի կիրառվում: Կառավարություններն իրենք պետք է որոշեն, թե արդյոք ՌԷԳ պահանջվո՞ւմ է, թե՞ ոչ: Այս գործընթացը կոչվում է նախնական գնահատում կամ սկրինինգ (հոդված 4.4): Եթե նախագիծը կամ ծրագիրը, կամ դրա աննշան փոփոխությունը, ըստ էության, ունենա զգալի բնապահպանական, ներառյալ առողջապահական ազդեցություն, ապա պետք է կիրառվի ՌԷԳ (հոդված 5.1):

Նախագծերի և ծրագրերի երկու տեսակներ ազատվում են ՌԷԳ կիրառումից՝

- Նախագծեր և ծրագրեր, որոնք բացառապես ծառայում են ազգային պաշտպանության և քաղաքացիական արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտներին (հոդված 4.5):

- Զուտ ֆինանսական կամ բյուջետային նախագծեր և ծրագրեր (հոդված 4.5):

ՌԷԳ արձանագրությունը վերաբերում է ազգային և տեղական մակարդակներում պետական մարմինների կողմից նախապատրաստված նախագծերին և ծրագրերին: Այն կիրառելի չե արդեն գոյություն ունեցող ռազմավարական նշանակության փաստաթղթերի վրա, որոնք ընդունվել են նախքան երկիրը կմիանար Արձանագրությանը. այն կիրառվում է միայն առաջարկվող նոր նախագծերի և ծրագրերի համար:

ՌԷԳ-Ը ՊԱՐՏԱԴԻՐ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ՝

- Գյուղատնտեսություն
- Անտառաբուծություն
- Ձկնաբուծություն
- Էներգիա
- Արդյունաբերություն, ներառյալ
- հանքարդյունաբերություն
- Տրանսպորտ
- Տարածաշրջանային զարգացում
- Թափոնների կառավարում
- Ջրի կառավարում
- Հեռահաղորդակցություն
- Զբոսաշրջություն
- Քաղաքի և երկրի պլանավորում
- Հողօգտագործում

04 ՀԱՐՑ 1

Արդյո՞ք ՌԷԳ պահանջվում է միայն այն փաստաթղթերի համար, որոնք կոչվում են «նախագիծ» կամ «ծրագիր»:

ՊԱՏԱՍԽԱՆ

Մեծ թվով պաշտոնական ռազմավարական փաստաթղթեր ունեն նախագծերի, ծրագրերի և քաղաքականության հատկանիշներ, ինչպես սահմանված է ըստ Արձանագրության և ՌԷԳ Դիրեկտիվի, հետևաբար՝ պետք է ենթարկվի ՌԷԳ-ի: Հաճախ այդ փաստաթղթերն ունեն տարբեր անվանումներ, օրինակ՝ «ռազմավարություն», «կոնցեպտ», «ուղեցույց» կամ «պայմաններ»: Փաստաթղթի ոչ թե անվանումը, այլ բնույթն ու բովանդակությունն են որոշում, թե՞ արդյոք ՌԷԳ պետք է կամ պետք չէ կիրառել յուրաքանչյուր որոշակի դեպքում: Արձանագրության մեջ նշվում է, որ «նախագծեր և ծրագրեր» հասկացությունը ներառում է այն նախագծերը և ծրագրերը (և դրանց բովանդակության մեջ կատարվող փոփոխությունները), որոնք պահանջում են օրենսդրական, կարգավորիչ կամ վարչական ընթացակարգեր, որոնք ենթակա են իրավասություն ունեցող մարմնի կողմից նախապատրաստման և (կամ) հաստատման, կամ որդեգրման, ներկայացվում է լիազոր մարմնի կողմից, պաշտոնական կարգով, խորհրդարանի կամ կառավարության կողմից ընդունմանը (հոդված 2.5):

Աղբյուրը՝Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության իրականացման առաջին դիտարկում/վերանայում (2010-2012թթ.)

ՕՐԻՆԱԿ 1

Նախագծեր և ծրագրեր, որոնք տարբեր երկրներում կիրառում են ՌԷԳ

ՆԵՐՔԻՆ ՌԷԳ-ԵՐ

Դանիա- Տրանսպորտի նախարարության կողմից իրականացվող ամենամյա ներդրումային ծրագրեր

Ֆրանսիա- Անտառների կառավարման պլաններ (ներառյալ մասնավոր անտառները)

Հունգարիա- Ներդրումների խրախուսմանն ուղղված ծրագրեր

Լեհաստան- Քաղաքային վերանորոգման ծրագրեր

Մոնտենեգրո- Ածխաջրածինների հետազոտության և արտադրության ծրագիր

Աղբյուրը՝ պրոֆեսոր Ջերսի Ջենդրոսկա (Լեհաստան)

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՌԷԳ-ԵՐ

Գերմանիա- Նոչտենում հանքարդյունաբերության ոլորտի նախագիծ

Ֆինլանդիա-Հանկիվիի համար հատուկ զարգացման նախագիծ՝ կապված Չեխիայի նոր ատոմային էլեկտրակայանի հետ. Լիբերեց շրջանի էներգետիկ կոնցեպտի նախագծման արդիականացում:

Աղբյուրը՝Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության իրականացման առաջին դիտարկում/վերանայում (2010-2012թթ.)

Իրականացված ՌԷԳ-երի քանակը
2010-2012թթ. ընտրված երկրներում



*Ներառյալ գյուղատնտեսություն, անտառաբուծություն, ձկնաբուծություն



** Օդի պահպանություն 4, բնապահպանություն 2



*** ՌԷԳ ենթակա քաղաքային և պետական նախագծումը կամ հողօգտագործումը հիմնականում փոքր տարածքների հողօգտագործման մանրամասն պլաններ են ներառում: Այնուամենայնիվ, այդ ծրագրերը տարբեր ներդրումային առաջարկներ են սահմանում էլեկտրաէներգիայի արտադրություն, ճանապարհներ, քաղաքաշինության զարգացման ծրագրերի, հյուրանոցային համալիրների նախագծում և այլն:

05 ՄԱԿ ԵՏՀ ՌԷԳ-Ի ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՌԷԳ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ՌԷԳ անհրաժեշտության բացահայտում



01
Շրջանակների որոշում



02
Բնապահպանական զեկույց

03
Խորհրդակցություններ

Առողջապահական մարմիններ

Բնապահպանական մարմիններ

Ազդակիր կողմեր

Հասարակություն

04
Որոշումների ընդունման գործընթաց



05
Մշտադիտարկում

01 Շրջանակների որոշում

Երբ հաստատվել է, որ տվյալ նախագիծը կամ ծրագիրը վերաբերում է Արձանագրությամբ հաստատված շրջանակներին, այդ նախագծի կամ ծրագրի ՌԷԳ-ը սկսվում է նախնական գնահատումից (հոդված 6)։ Շրջանակը սահմանում է նախագծի կամ ծրագրի իրականացման հետ կապված բնապահպանական և առողջապահական այն խնդիրները, որոնց պետք է հետագայում անդրադառնալ։ ՌԷԳ հստակ շրջանակի վաղ հաստատումն օգնում է աշխատանքը կենտրոնացնել իսկապես կարևոր հանգամանքների վրա և ավելի արդյունավետ օգտագործել ռեսուրսները։ Շրջակա միջավայրի և առողջապահության ոլորտի ներկայացուցիչները, ինչպես նաև հանրությունը, պետք է խորհրդակցեն ՌԷԳ շրջանակը որոշելու ժամանակ։

02 Բնապահպանական զեկույց

Տիրապետելով նախնական գնահատումից ստացված տեղեկատվությանը՝ փորձագետները վերլուծում են նախագծի կամ ծրագրի հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի և առողջության վրա և մշակում են մեղմացնող միջոցառումներ և այլընտրանքային պլանավորման տարբերակներ, որոնք կարող են նվազեցնել բացասական և ընդլայնել դրական ազդեցությունները։ Բոլոր արդյունքները պետք է փաստաթղթավորվեն և ներկայացվեն բնապահպանական զեկույցում (հոդված 7)։ ՌԷԳ Արձանագրությունը սահմանում է այն տեղեկատվությունը, որ պետք է ներառվի։ Այն մարմիններին, ովքեր պետք է որոշում կայացնեն նախագծի կամ ծրագրի ընդունման վերաբերյալ, օրինակ՝ Էներգետիկայի կամ Տրանսպորտի նախարարությանը, բնապահպանական զեկույցը տրամադրում է արժեքավոր տեղեկություններ, որոնք կօգնեն նրանց հաշվի առնել շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցությունները և կկարողանան համայնքի համար լավագույն լուծում գտնել։

03 Խորհրդակցություններ

Նախքան որևէ որոշում կայացնելը, բնապահպանական և առողջապահական մարմինները պետք է խորհրդակցեն շրջակա միջավայրի մասին զեկույցի եզրակացությունների վերաբերյալ, և շահագրգիռ հանրությունը պետք է հրավիրվի՝ արտահայտելու իր կարծիքը (հոդվածներ 8 և 9)։ Բացի դրանից, հարևան երկրները ևս պետք է հնարավորություն ունենան կիսելու իրենց մտահոգություններն այն դեպքերում, երբ ակնկալվում են նաև անդրսահմանային ազդեցություններ (հոդված 10)։ Հնարավորինս թափանցիկ և համապարփակ արդյունքներ ստանալու համար նման խորհրդատվությունները շատ կարևոր են ՌԷԳ ողջ գործընթացի համար։

04 Որոշումների ընդունման գործընթաց

Խորհրդատվության արդյունքները պարտադիր չեն, սակայն վերջնական որոշում կայացնելուց առաջ որոշում կայացնողները հաշվի են առնում բոլոր կարծիքները։ Նրանք նաև պետք է վերջնական որոշման մասին տեղեկացնեն բնապահպանական և առողջապահական մարմիններին, հասարակությանը (հոդված 11)։

05 Մշտադիտարկում

Որոշում կայացնելուց հետո Կողմերը պարտավոր են իրականացնել նախագծի կամ ծրագրի հետևանքների մշտադիտարկում, ինչպես նաև դարձնել այդ մշտադիտարկման արդյունքները հրապարակայնորեն մատչելի (հոդված 12)։

06 ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՌԷԳ ՕԳՈՒՏՆԵՐԸ

ՌԷԳ-Ն ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ

ՌԷԳ-ը բացահայտում է առաջարկվող ռազմավարական զարգացման տարբերակների հնարավոր բնապահպանական և առողջապահական ազդեցությունները: ՌԷԳ-ը համապատասխան մարմիններին ներկայացնում է այդ ազդեցությունները մեղմելու առաջարկություններ և զարգացման այլընտրանքային հնարավորություններ: Այս տեղեկատվության միջոցով համապատասխան մարմինները կարող են կրճատել կամ խուսափել զարգացման անդառնալի և ծանր հետևանքներից, պաշտպանել պահպանվող տարածքները և վայրերը, պահպանել կենսական նշանակություն ունեցող այն վայրերը և ոլորտները, որոնք կարևոր են կենսաբազմազանության պահպանման համար:

06 ՅԱՐՑ 2

Արդյո՞ք ՌԷԳ կիրառումը դժվար և ծանրաբեռնված գործընթաց է:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՌԷԳ-ը երկար և բարդ հետազոտական ուսումնասիրություն չէ, այլ ռազմավարական մակարդակով որոշումների կայացման գործընթացի բարելավմանն ուղղված գործնական գործիք, որն ընդգծում է նախագծերի կամ ծրագրերի իրականացման հետ կապված բնապահպանական և առողջապահական ռիսկերը: Բոլոր հնարավոր հետևանքներն ուսումնասիրելու փոխարեն ՌԷԳ-ը կենտրոնանում է մի քանի կարևոր ասպեկտների վրա, որտեղ կարող են առաջանալ հիմնական ազդեցությունները: Այս փաստը ՌԷԳ-ը դարձնում է ծախսարդյունավետ, խնայում է ժամանակ և գումար: ՌԷԳ-ը կարող է ավելի բարդանալ, երբ ինստիտուտները և գործնական մասնագետները ձեռք են բերում փորձ, և անհրաժեշտություն է առաջանում համապատասխանել պատասխանատուների կարողություններին և ժամանակի ընթացքում կուտակված գիտելիքներին:

ՕՐԻՆԱԿ 2

ՌԷԳ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Բուլղարիայում ՌԷԳ-ի արդյունքում Վերականգնվող էներգիայի ազգային ծրագրի նախագիծ (2011-2020) են ներառվել որոշակի սահմանափակումներ և արգելքներ հատուկ տարածքներում վերականգնվող էներգիայի նախագծերի մշակման համար:
Դանիայում ևս ՌԷԳ ընթացակարգը հանգեցրեց հողմակայանների համար մեկ վայրի բացառմանը՝ աղմուկի սպասվածից բարձր մակարդակի պատճառով, ինչը կարող էր խանգարել մոտակա բնակավայրերի բնակիչներին:
Հունգարիայում ՌԷԳ եզրակացությունների հիման վրա իշխանությունները հրաժարվեցին Պիլիսենտկերեստ (Pilisszentkereszt) գյուղի զարգացման ծրագրից, որպեսզի կանխեն նախատեսված շինարարական աշխատանքների հետ կապված բացասական բնապահպանական ազդեցությունները:
Նիդեռլանդներում ՌԷԳ-ը խողովակաշարերի ազգային ռազմավարական քաղաքականության նախագծում որոշ փոփոխությունների հանգեցրեց. բնապահպանական անվտանգությունից ելնելով՝ որոշ խողովակաշարերի երթուղիներ փոփոխվել կամ նվազեցվել են:
Ռումինիայում ՌԷԳ-ի արդյունքում ձևափոխվեց ափամերձ պաշտպանության և վերականգնման գլխավոր պլանը՝ գոյություն ունեցող «Natura 2000» տեղանքը պաշտպանելու համար:

Աղբյուրը՝Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության իրականացման առաջին

ՌԷԳ-Ը ՆՊԱՍՏՈՒՄ Է ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԵՎ ՕԳՆՈՒՄ ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ

ՌԷԳ-ն ձեռնարկողներին տրամադրում է գործիք, որը թույլ է տալիս շրջակա միջավայրի նպատակներին (ինչպիսիք են՝ կենսաբազմազանության պաշտպանություն, բարձր էներգաարդյունավետություն կամ կլիմայական փոփոխությունների ազդեցությունների մեղմում) հասնել տնտեսական շահերի և նպատակների հետ միասին:
Այն նպաստում է կանաչ տնտեսության նպատակների իրագործմանը՝ էկոհամակարգերի հնարավորությունների շրջանակներում հաշվի առնելով կայուն այլընտրանքները և խրախուսելով հետագա տնտեսական զարգացման համար շահավետ տարբերակների որոնումը:

06 ՀԱՐՑ 3

Արդյո՞ք ՌԷԳ-ը համարվում է էլիտար և թանկ գործիք հարուստ երկրների համար:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՌԷԳ ծախսերը տարբերվում են՝ կախված ՌԷԳ շրջանակից և բարդությունից, որն իր հերթին կախված է գնահատվելիք նախագծի կամ ծրագրի մասշտաբներից, գնահատման ենթակա այլընտրանքների թվից, ինչպես նաև ՌԷԳ-ի համար ընտրված հատուկ պլանմեթոդաբանությունից: ՌԷԳ-ի մասին Արձանագրությունը չի նախատեսում որոշակի մեթոդաբանություն, այլ հնարավորություն է տալիս Կողմերին օգտագործելու իրենց հնարավորություններին և տնտեսական կարողություններին համապատասխան ընթացակարգ: Հետևաբար, եթե երկիրը հնարավորություն ունի մշակել, նախագիծ կամ ծրագիր, ապա այն նաև ունի կարողություններ, որպեսզի իրականացնի ՌԷԳ:

Եվրոպական միությունում, ՌԷԳ ուսումնասիրության համաձայն՝ ՌԷԳ իրականացման ծախսերը տատանվում են պլանավորման արժեքի 5-ից 10 տոկոսի սահմաններում, մարգինալ են համեմատած նախագծերի կամ ծրագրերի իրականացման ծախսերի հետ (այսինքն՝ ֆինանսավորում են պլանավորման փաստաթղթով առաջարկվող բոլոր գործողությունները և ծրագրերը):

Երբ ՌԷԳ-ը կարող է իրականացվել առանց թանկարժեք մոդելավորման կամ տվյալների մշակման այլ համալիր գործիքների, այդ ծախսերը հիմնականում կապված են ՌԷԳ իրականացնող աշխատակիցների, գործնական մասնագետների վարձավճարների հետ, որոնց շատ երկրներում վարձում են պատասխանատու մարմինները՝ ՌԷԳ ընթացակարգն իրականացնելու համար: Փորձը ցույց է տվել, որ փոքր քաղաքային ՌԷԳ-եր կարող են իրականացվել 30 աշխատանքային օրվա ընթացքում: Միջին ծավալով ՌԷԳ-երը պահանջում են 50-100 աշխատանքային օր, իսկ ավելի մեծամասշտաբ ՌԷԳ-երը պահանջում են 150-300 աշխատանքային օր՝ կախված այն տեղեկատվությունից, որն անհրաժեշտ է մշակել:

Աղբյուրը՝ԵՄ հանձնաժողով, ՇՄԱԳ-ծախսեր և օգուտներ 14

ՌԷԳ-Ը ԲԱՐԵԼԱՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

ՌԷԳ-ը հիմնականում բարելավում է նախագծման և ծրագրման գործընթացների ընդհանուր որակը՝ ուշադրության կենտրոնում պահելով, խթանելով և ապահովելով բաց միջավայր այնպիսի այլընտրանքների համար, որոնք ոչ միայն բնապահպանական տեսանկյունից անվտանգ են, այլ նաև ավելի ծախսարդյունավետ: Այն խրախուսում է պլանավորում իրականացնող մարմիններին դիտարկել ռիսկերի և հնարավորությունների ամբողջական շարք՝ զարգացման ավելի կայուն ձևեր ապահովելու նպատակով:
Այն երկրների համար, որտեղ պլանավորման ընթացակարգերը դեռևս ամրագրված չեն և տարբեր գործողությունների լաբիրինթոս են, ՌԷԳ-ի այս ազդեցությունը հատկապես արդիական է: Այս երկրներում արդյունավետ կառուցվածքով ՌԷԳ շրջանակի ներդրումը պլանավորման գործընթացը դարձնում է ավելի համակարգված, քիչ պարբերական և, ի վերջո, առավել արդյունավետ:

06 ՀԱՐՑ 4

Արդյո՞ք ՌԷԳ-ը ձգձգում է պլանավորման գործընթացը:

ՊԱՏԱՍԽԱՆ

Նախագծման և ծրագրման մի շարք քայլեր տրամաբանական կապ ունեն ՌԷԳ ընթացակարգի հետ: Հետևաբար, ավելի արդյունավետ է ներառել ՌԷԳ-ը պլանավորման գործընթաց, քան իրականացնել առաջինը, ապա մյուսը: Սա տնտեսում է ժամանակը և չի պահանջում լրացուցիչ ծախսեր պլանավորման ընթացակարգի համար: Պլանավորումն ու ՌԷԳ-ը կարող են միասնական ջանքեր ներդնել, օրինակ՝ հարցումների տվյալները լրացնելիս, ազգային մարմինների և հանրության հետ խորհրդակցություններ անցկացնելիս և վերանայման գործընթացները ձեռնարկելիս: Պլանավորում և ՌԷԳ իրականացնող թիմերը կարող են տեղեկացնել միմյանց արդյունքների, դրանց զարգացման և վերափոխման գործընթացի մասին, որը թույլ է տալիս ՌԷԳ եզրակացությունները ներառել նախագծի կամ ծրագրի մշակման գործընթաց: Փորձը ցույց է տվել, որ 1-2 տարի տևողությամբ պլանավորման ընթացակարգերի դեպքում ՌԷԳ-ը գրեթե երբեք չի երկարաձգել այդ գործընթացը, եթե ինտեգրված է եղել դրա ընթացակարգին:

Աղբյուրը՝ ՌԷԳ Արձանագրության կիրառմանն աջակցող ՄԱԿ ԵՏՀ Ռեսուրսների ձեռնարկ (2011) 13

ՕՐԻՆԱԿ 3

ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Օրհի քաղաքի գլխավոր հատակագծի ՌԷԳ-ն օգնեց հատակագծի մշակման թիմին բացահայտել բնապահպանական հիմնական խնդիրները, ստանալ նոր բնապահպանական տվյալներ և պատրաստել շրջակա միջավայրի վերաբերյալ քարտեզներ, որոնք գործարար տվյալները և զարգացման հնարավորությունները համատեղում են բնական տարածքների վայրերի և սահմանների, գետավազանների և բնապահպանական գոտիների, ինչպես նաև օդային և ջրային աղտոտման տվյալների հետ: Այս տեղեկությունները զգալիորեն բարելավեցին հատակագծի բնապահպանական հատվածը: ՌԷԳ-ն օգնեց նաև բարելավել ճանապարհային սխեմաները և արդարացնել թափոնների կառավարման պատշաճ սխեմաների ներդրումը նշված վայրեր, ինչպես նաև նշել այն վայրերը, որտեղ թափոնների կառավարման կառույցներ, հարմարություններ չեն կարող տեղակայվել: Հաշվի առնելով ՌԷԳ հաշվետվության տրամադրած տեղեկատվությունը՝ Օրհիի քաղաքապետարանն այժմ կարողանում է դիմել ազգային կառավարության հիմնադրամներին և դոնորներին՝ ճանապարհների և թափոնների կառավարման սխեմաների համար անհրաժեշտ միջոցներ հատկացնելու խնդրանքով:
ՌԷԳ-ի ընթացքում հավաքագրված տվյալներում բացերի բացահայտումը նպաստեց կանոնավոր վիճակագրական տվյալների հավաքագրման և համախմբման սխեմաների բարելավմանը՝ ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակներում: ՌԷԳ-ի արդյունքում հասանելի կլինեն շրջակա քաղաքային բնակավայրերի վրա աղմուկի մակարդակների և քարե հանքավայրերի շահագործման ազդեցությունների վերաբերյալ տեղեկությունները:

Աղբյուրը՝ Մոլդովայի Հանրապետության բնապահպանության նախարարություն

ՌԷԳ իրականացվել է նախագծի կամ ծրագրի մշակումից հետո



ՌԷԳ իրականացվել է նախագծի կամ ծրագրի նախապատրաստմանը զուգահեռ



ՌԷԳ-Ը ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ

ՌԷԳ-ը հնարավորություն է տալիս պլանավորում իրականացնողներին որոշումներ կայացնելուց առաջ հաշվի առնելու բնապահպանական և առողջապահական խնդիրները, այն դեպքում, երբ բազմաթիվ այլընտրանքներ դեռևս կարող են դիտարկվել: ՌԷԳ-ը նաև թույլ է տալիս որոշումների կայացման տարբեր փուլեր և մակարդակներ ներգրավել մտահոգիչ հարցերը: Նախագծման կամ ծրագրման մակարդակներում որոշումների ավելի արդյունավետ և ավելի հետևողական կայացումը գործառնական փուլում հանգեցնում է ավելի քիչ բողոքների և քննարկումների: Որոշումների կայացման նման գործընթացները խնայում են ժամանակն ու դրանով իսկ ծախսարդյունավետ են:

06 ՀԱՐՑ 5

Արդյո՞ք ՌԷԳ-ը որոշում կայացնելու լիազորությունը պլանավորում իրականացնող մարմնից փոխանցում է շրջակա միջավայրի համար պատասխանատու նախարարությանը:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՌԷԳ Արձանագրությունը սահմանում է, թե որ նախագծերն ու ծրագրերն են ենթակա ՌԷԳ ընթացակարգի, և ապահովում է պարտադիր խորհրդատվություն բնապահպանական և առողջապահական մարմինների հետ: Կառավարություններին է թողնվում իրենց ազգային իշխանությունների վրա տարածել ՌԷԳ-ի իրականացման դերերը և պարտականությունները: Արձանագրության Կողմ հանդիսացող շատ երկրներում պլանավորում իրականացնող մարմինն է կրում ՌԷԳ ընթացակարգի իրականացման կամ համակարգման հիմնական պատասխանատվությունը: Շրջակա միջավայրի և առողջապահության համար պատասխանատու նախարարությունները սովորաբար ունենում են աջակցող և/ կամ խորհրդատվական դեր: Նրանք նաև վերանայում են ՌԷԳ փաստաթղթերի որակը և առաջարկություններ են տալիս պլանավորման մարմիններին, սակայն չեն միջամտում նախագծի կամ ծրագրի վերաբերյալ ընդունված վերջնական որոշմանը:

ՕՐԻՆԱԿ 4

ԽՈՐՎԱԹԻԱ

Պոժեգա-Սլավոնիա (Požega-Slavonija) շրջանի տարածական պլանի ՌԷԳ-ն իրականացվել է 2014 թվականին: ՌԷԳ հաշվետվությունն ավարտելու համար պահանջվեց 2 ամիս և լրացուցիչ 4 ամիս՝ շրջակա միջավայրի և առողջապահական մարմինների և հասարակության հետ համապատասխան խորհրդատվություններն ավարտին հասցնելու համար: ՌԷԳ թիմն ամուր կապեր և համակարգված հարաբերություններ էր հաստատել պլանավորում իրականացնող թիմի և ղեկավարության հետ, որպեսզի երկու կողմն էլ պատրաստակամ լինեին փոխանակելու իրենց տիրապետության տակ գտնվող տվյալները ՌԷԳ փորձագետների հետ: Շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցությունների գնահատման համար ընտրվել էր աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) օգտագործման մեթոդը: ՌԷԳ թիմը սահմանել էր չափորոշիչներ, որոնց հիման վրա բացահայտվում էին հողօգտագործման սահմանափակումները, ներառյալ սանիտարական պահպանության գոտիները, գետա-հովտային, բնության պահպանվող և գյուղատնտեսական տարածքները, արժեքավոր լանդշաֆտները և այլն: Դրանք օգտագործվել են որպես գնահատման հիմք: Կախված նախատեսվող գործողությունների գտնվելու վայրից (սահմանափակումների գոտիների ներսում, դրսում կամ մոտակայքում)՝ առաջարկվել են ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ: Դրանից հետո պլանավորում իրականացնող թիմի և ղեկավարության հետ կազմակերպվել են ՌԷԳ արդյունքների վերաբերյալ մի քանի քննարկումներ: Ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների մեծ մասն ընդունվել և ինտեգրվել են Պլան: Այժմ նախագծերը մշակվում են միայն չսահմանափակվող գոտիների համար:

Աղբյուրը՝ Իվան Սարից, «Dvocut Ecro» ՍՊԸ (հարցազրույց)

ՕՐԻՆԱԿ 5

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Չեխիայի Հանրապետության 2007-2014թթ. ձեռնարկությունները և ինովացիաները» գործառնական ծրագրի համար ՌԷԳ-ն առաջարկել է բնապահպանական և առողջապահական մոնիթորինգի ընդհանուր սխեմա, ներառյալ 18 բնապահպանական և առողջապահական չափորոշիչներ, որոնք հաշվի են առնվում ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող առանձին ծրագրերի գնահատման և ընտրության ժամանակ: Այնուամենայնիվ, Արդյունաբերության և առևտրի նախարարությունը, որը պատասխանատու էր ծրագրի մշակման և իրականացման համար, ընդունեց միայն այն չափանիշները, որոնք առավել համապատասխանում էին ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերին: Թեև ՌԷԳ ոչ բոլոր չափանիշներն են ներառվել ծրագրի ընտրության գործընթացմ, ՌԷԳ-ի շնորհիվ նախարարությունը բարելավեց ծրագրի բնապահպանական և առողջապահական բաղադրիչները՝ ընտրելով այնպիսի ծրագրեր, որոնք կարող էին բավարարել ՌԷԳ չափանիշները:

Աղբյուրը՝«Integra Consulting» ՍՊԸ

ՌԷԳ-Ը ԲԱՐԵԼԱՎՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՌԷԳ-ը նպաստում է արդյունավետ կառավարմանը և որոշումների կայացման գործընթացին հանրության վստահության բարձրացմանը՝ խթանելով նախագծման և ծրագրման թափանցիկությունը: ՌԷԳ-ը հստակ ընթացակարգեր է ապահովում պլանավորում իրականացնող ազգային և տեղական հիմնական մարմինների, բիզնեսի և քաղաքացիական հասարակության միջև: Այն նպաստում է տնտեսության համար ավելի իրազեկ, վստահելի որոշումների կայացմանը՝ լուծումներ առաջարկելով կանաչ տնտեսության համար և պահպանելով գործարար միջավայրի վստահությունը:

06 ՅԱՐՑ 6

Արդյո՞ք ՌԷԳ-ը՝ որպես պետական կառավարման համար նախատեսված գործիք, առնչություն չունի հանրության լայն զանգվածների հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ

Հանրության մասնակցության ապահովումը ՌԷԳ հիմնաքարերից մեկն է: Բացի որոշակի տեղեկատվության հասանելիությունից, ՌԷԳ-ի մասին Արձանագրությունը հանրությանը նաև հնարավորություն է տալիս մասնակցելու և իր կարծիքն արտահայտելու ՌԷԳ շրջանակների որոշման և բնապահպանական հաշվետվությունների նախագծերի վերաբերյալ: Այս գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար ՌԷԳ Արձանագրությունը հատուկ պահանջ է ներառում առաջարկվող նախագծերի կամ ծրագրերի ոչ տեխնիկական ամփոփման համար: Այն նախատեսված է ոչ մասնագետների համար, այնպես որ նա հստակ հասկանա, թե ինչ են ծրագրում իրականացնող մարմիններն առաջարկում անել, ինչպիսի այլընտրանքներ կան, և որոնք են յուրաքանչյուր այլընտրանքի հետևանքները: ՌԷԳ-ի վերաբերյալ Արձանագրության համաձայն՝ ազգային ՌԷԳ օրենսդրությունը պետք է ներառի հասարակության մասնակցության վերաբերյալ դրույթներ:

ՕՐԻՆԱԿ 6

ՍԼՈՎԱԿԻԱ

2000թ. Սլովակիայի էներգետիկ քաղաքականության ՌԷԳ-ը սկսվեց քաղաքականության նախապատրաստման սկզբնական փուլում: Էկոնոմիկայի նախարարությունը մշակել էր էներգետիկ քաղաքականության նախագիծ՝ ՀԿ-ների մեկնաբանությունները ստանալու համար, ինչպես նաև փաստաթուղթ՝ խորհրդարանական հանդիպումների ընթացքում քննարկելու համար: Էներգետիկ քաղաքականության նախագծի ամբողջական տեքստը հասանելի էր համացանցի և կառավարության մարմինների միջոցով: «Economic News»-ի միջոցով մեկնաբանություններով հանդես գալու վերաբերյալ հրավեր է հրապարակվել: Երկու ամիս ժամանակ էր հատկացվել ՌԷԳ շրջանակների հանրային դիտարկման և մեկնաբանությունների ներկայացման համար: Ստացվել էին ավելի քան 400 մեկնաբանություններ:

Աղբյուրը՝ Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատմանը հանրության մասնակցությոան վերաբերյալ առաջարկություններ, ՄԱԿ ԵՏՀ

ՕՐԻՆԱԿ 7

ԻՍՊԱՆԻԱ

Իսպանիայի կայուն գյուղական զարգացման ծրագրի նախապատրաստման գործընթացում հանրային մասնակցության ապահովման արդյունքում ստացվել է շուրջ 700 արձագանք, իսկ ծրագրի բարելավման վերաբերյալ՝ շուրջ 1 200 առաջարկ: Դրանցից 46 տոկոսը վերաբերում էր ծրագրային գործողություններին, ՌԷԳ-ին և գյուղական ռազմավարությանը: Այդ առաջարկների 85 տոկոսն ընդունվել են: Դրանք ներառում էին բնության պահպանվող բոլոր տարածքների համար երաշխավորված ջրամաքրում, շրջակա միջավայրի պահպանության դրույթների կիրարկում և տեղական ու տարածաշրջանային մակարդակներում որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության երաշխավորում:

Աղբյուրը՝ Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատմանը հանրության մասնակցության վերաբերյալ առաջարկություններ, ՄԱԿ ԵՏՀ

ՌԷԳ-Ը ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ Է ԾԱԽՍԱՏԱՐ ՍԽԱԼՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ՌԷԳ-ը օգնում է երկրներին կանխել ծախսատար սխալները, որոնք առաջանում են բնապահպանական և առողջապահական ազդեցությունների անտեսման պատճառով, տրամադրելով էկոլոգիապես անկայուն զարգացման տանող տարբերակների վերաբերյալ նախազգուշական ազդանշաններ: Դա նվազեցնում է վնասի փոխհատուցման կամ ուղղիչ գործողությունների ծախսատար ռիսկը, օրինակ՝ օբյեկտները տեղափոխելը կամ վերափոխելը: Դա նաև խնայում է ժամանակն ու գումարը:

ՕՐԻՆԱԿ 8

ԱԴՐԲԵՋԱՆ

ՌԷԳ կիրառվել է 2015-2020թթ. Ադրբեջանի Հանրապետությունում այլընտրանքային և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման ազգային ռազմավարության համար: Չնայած ռազմավարությունն ընդհանուր է և ընդգծում է միայն վերականգնվող էներգետիկայի զարգացման հիմնական գերակայությունները՝ առանց հստակեցնելու նախագծերի հնարավոր շրջանակները կամ տարածքները, որտեղ այդ հնարավոր ծրագրերը կիրականացվեն, ՌԷԳ-ը տրամադրեց որոշակի ցուցումներ այն տարածքների վերաբերյալ, որտեղ պետք է խուսափել վերականգնվող էներգիայի որոշակի տեսակներից, քանի որ դրանք կարող են միջամտել թռչունների միգրացիոն միջանցքներին կամ վնասել ափամերձ ջրային հատվածները: Ուստի վերականգնվող էներգիայի արտադրության և ծրագրերի նախագծման հետագա պլանավորումը կարող է իրականացվել առանց շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների ռիսկի:

Աղբյուրը՝ Ադրբեջանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական պաշարների նախարարություն

ՕՐԻՆԱԿ 9

ԱՐԱԼՅԱՆ ԾՈՎ

Արալյան ծովի ողբերգությունը դրամատիկ օրինակ է, թե ինչ կարող է տեղի ունենալ, երբ զարգացման նախագծերի և ծրագրերի բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցությունները հաշվի չեն առնվում: Արալյան ծովը եղել է աշխարհի չորրորդ խոշորագույն լիճը և նպաստում էր ձկնաբուծարանների, հարուստ կենդանական աշխարհի և մեծաթիվ մարդկային բնակչության գոյությանը: Այժմ այն ոռոգման լքված ենթակառուցվածքներով և ժանգոտված նավերով, պեստիցիդներով, պարարտանյութերով և այլ քիմիական նյութերով աղտոտված անապատային հող է: 1960-ական թվականներին խորհրդային իշխանությունները որոշեցին Արալյան ծովը «սնող» երկու գետերը՝ Ամուդարյան հարավ-արևմուտքում, Սիրդարյան արևելքում, ուղղել անապատը ոռոգելուն, որպեսզի այնտեղ բրինձ, հացահատիկ և բամբակ աճեցնելու փորձ կատարվի: Արալյան ծովի ձկնորսական արդյունաբերությունը, որտեղ ժամանակին աշխատել էր մոտ 40000 և ըստ տեղեկությունների ապահովում էր Խորհրդային Միության ողջ ձկնարտադրության մեկ վեցերորդ մասը, ավերվել է, իսկ նախկին ձկնորսական քաղաքները, որոնք գտնվում են դրա ափերին, դարձել են նավերի գերեզմաններ: ՌԷԳ-ը կարող է ապագայում կանխարգելել պլանավորման նման ճակատագրական սխալները՝ կանխատեսելով շրջակա միջավայրի ազդեցության հետևանքները, և տրամադրել կենսունակ զարգացման այլընտրանքներ:

ՌԷԳ-Ն ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՇՄԱԳ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ռազմավարական մակարդակով նախագծերում և ծրագրերում շրջակա միջավայրի և առողջապահության հետ կապված խնդիրների բացահայտումը ծրագրման մակարդակում կարող է նպաստել նաև ՇՄԱԳ-ների հզորացմանը և դրանց բարելավմանը: ՌԷԳ-ը կարող է անդրադառնալ այնպիսի հետևանքների, որոնք դժվար է հասկանալ ծրագրային մակարդակում, մասնավորապես ՌԷԳ-ը կարող է տրամադրել լայնածավալ և կուտակային ազդեցությունների վերաբերյալ նախազգուշացումներ, այդ թվում՝ այն ազդեցությունների, որոնք առաջանում են մի շարք փոքրածավալ նախագծերի հետևանքով, որոնք էլ իրենց հերթին ենթական ՇՄԱԳ-ի:

06 ՀԱՐՑ 7

Արդյո՞ք ՌԷԳ-ը կրկնում է ՇՄԱԳ-ի շրջանակներում իրականացված աշխատանքը:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՇՄԱԳ-ը և ՌԷԳ-ը շրջակա միջավայրի գնահատման ընթացակարգային գործիքներ են, որոնք նախատեսված են կանխարգելելու տնտեսական զարգացման ցանկացած բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Այնուամենայնիվ, դրանք զգալիորեն տարբերվում են՝ կախված իրականացվող գործունեության տեսակից և գնահատման շրջանակներից:

Համամատած ՇՄԱԳ-ների համեմատությամբ, որոնք իրականացվում են անհատական նախագծերի համար, ՌԷԳ-ն ավելի շուտ է միջամտում որոշումների կայացման գործընթացին և ուղղված է կառավարության ծրագրերին և նախագծերին, ինչպես նաև քաղաքականությանը և օրենսդրությանը: ՇՄԱԳ-ն ուղղված է որոշակի ծրագրի ֆիզիկական ազդեցությանը շրջակա միջավայրի վիճակի վրա, իսկ ՌԷԳ-ը վերլուծում է, թե արդյոք առաջարկվող ռազմավարական փաստաթղթի իրականացումը կարո՞ղ է խանգարել կամ նպաստել պետության կողմից սահմանված բնապահպանական նպատակներին: ՌԷԳ-ը նաև կարող է հավաքել անհատական նախագծերի կուտակային ազդեցությունները պլանավորման շատ վաղ փուլում:

Նախագծերում և ծրագրերում ՌԷԳ արդյունավետ կիրառումը կարող է նպաստել ծրագրային մակարդակում իրականացվող ՇՄԱԳ-ների կանոնակարգմանը՝ որոշելով այնպիսի վայրեր, որոնք առավել նպաստավոր են զարգացման որոշակի տեսակների համար՝ նվազեցնելով պոտենցիալ այլընտրանքների քանակը և որոշելով որոշակի խնդիրները, որոնք պետք է մանրամասն քննարկվեն հետագա ՇՄԱԳ-ներում: Հետևաբար՝ ՌԷԳ-ը նեղացնում է ՇՄԱԳ շրջանակը և կարող է ընդհանուր պլանավորման գործընթացը դարձնել ավելի արդյունավետ և պակաս աշխատատար: ՌԷԳ և ՇՄԱԳ տարբեր դերերը պետք է հստակեցվեն ՌԷԳ շրջանակների հստակեցման ժամանակ՝ աշխատանքների կրկնողությունից խուսափելու նպատակով:



ՕՐԻՆԱԿ 10

ԻՆԴՈՆԵԶԻԱ

2011-2025թթ. Ինդոնեզիայի տնտեսական զարգացման արագացման և ընդլայնման ազգային հատակագծի ՌԷԳ-ը նպատակ ուներ առկա բնապահպանական ճնշումների համատեքստում գնահատելու հատակագծի ներքո իրականացվելիք բազմաթիվ գործողությունների հավանական կուտակային ազդեցությունները: Օրինակ, Մեծ Ջակարտայի շրջանի համար, ՌԷԳ-ը գնահատել է այդ տարածքում ստեղծվելիք մի շարք նոր արդյունաբերական ճյուղերի կողմից իրականացվող մթնոլորտային արտանետումները: Արդյունքները ցույց տվեցին, որ գլխավոր հատակագծի իրականացման արդյունքում սպասվում են CO, NOx, SOx և PM նյութերի լրացուցիչ խոշոր ծավալներ, ինչն էական նշանակություն ունի հատկապես օդի բարձր աղտոտվածությամբ տարածքի համար: Այս տվյալների հիման վրա ՌԷԳ-ը կարող է խորհուրդ տալ որոշակի տարածքներում նվազեցնել առաջարկվող արդյունաբերական մի շարք նախագծերի թիվը, խիտ բնակեցված տարածքներից վերաբաշխել որոշակի նախագծեր կամ մշակել նոր ՇՄԱԳ ուղեցույցներ, օրինակ՝ օդի որակի մոդելավորման վերաբերյալ:

Աղբյուրը՝ «DHIWater & Environment and Integra Consulting» ՍՊԸ, 2015

ՌԷԳ-Ը ՆՊԱՍՏՈՒՄ Է ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՎԱՁԵՑՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌԲԳ-ը տարածաշրջանային համագործակցության համար կարող է կարևոր հարթակ հանդիսանալ՝ ընդհանուր պահպանվող տարածքների, ջրային ուղիների, տրանսպորտային կապերի և անդրսահմանային աղտոտման խնդիրների լուծման համար:

Այն դեպքերում, երբ նախատեսվող նախագիծը կամ ծրագիրը, ամենայն հավանականությամբ, շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցություն կունենա Կողմի ազգային սահմանների վրա, ՌԷԳ արձանագրությունը նախատեսում է տեղեկատվության փոխանակման և խորհրդատվությունների հստակ ընթացակարգեր ազգային սահմանների շրջանում: Երկխոսությունը զարգացման նախագծեր և ծրագրեր նախաձեռնող ազգային կառավարությունների միջև, որոնց քաղաքացիները և ազգային տարածքները կարող են տուժել զարգացման նմանատիպ ծրագրերից, շրջակա միջավայրի անդրսահմանային կամ երկարատև աղտոտումից, նպաստում է քաղաքական և ռեսուրսների վրա հիմնված պոտենցիալ միջազգային հակամարտությունների կանխմանը և տարածաշրջանային և գլոբալ կայունությանը:

Արդյունքում զարգացման ռազմավարության շրջանակներում պլանավորված գործունեության համար ներդրողը չի ցանկանա, որպեսզի իր գործունեությանը հետագայում դեմ լինեն ազգային իշխանությունները, կամ հասարակությունը, կամ ազդեցության ենթարկված երկիրը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս խուսափել ծրագրի իրականացման հետագա գործընթացի հետաձգումից և կորուստներից:

06 ՀԱՐՑ 7

Կարո՞ղ է արդյոք ՌԷԳ Արձանագրության մի Կողմը կանխարգելել կամ դադարեցնել այլ Կողմի իրականացրած ռազմավարական նշանակություն ունեցող զարգացման նախագծերը, ծրագրերը և քաղաքական կամ տնտեսական ճնշման հնարավորություն ստեղծել:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՌԲԳ-ի մասին Արձանագրությունը վետոյի որևէ իրավունք չի նախատեսում նախագծի կամ ծրագրի կողմից հնարավոր ազդեցության ենթարկված այլ Կողմերի համար: Կառավարությունն անկախ է նախագծի կամ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Արձանագրությունը պահանջում է միայն իրականացնել խորհրդակցություններ, եթե այլ երկրներ կարող են տուժել: Նման դեպքերում այդ երկրներին պետք է հնարավորություն տրվի բարձրացնելու իրենց մտահոգությունները և երկխոսություն հաստատելու նախագծի կամ ծրագրի իրականացման համար պատասխանատու կառավարության հետ, որպեսզի այդ մտահոգություններին համատեղ լուծում տրվի: Խորհրդակցությունների արդյունքները պետք է հաշվի առնվեն և հարկ եղած դեպքում ներառվեն որոշումների կայացման գործընթացում, սակայն դրանք պարտադիր չեն:

ՕՐԻՆԱԿ 11

ԼԵՀԱՍՏԱՆ

Լյուբասկի (Lubuskie) նահանգի տարածքային զարգացման պլանը տարածաշրջանային զարգացման և հողօգտագործման պլան է, որը ձևափոխվել է 2007 թ.:
Լյուբասկին գտնվում է Գերմանիայի հետ սահմանին: Այս տարածաշրջանն ունի բարձրարժեք բնական լանդշաֆտներ, Գերմանիայի և Լեհաստանի այլ հատվածների հետ բարենպաստ տրանսպորտային կապեր, Օդրա գետի ջրագիծ (եվրոպական էկոլոգիական միջանցք), բնական ռեսուրսների պաշարներ (հատկապես էներգետիկ ռեսուրսների), անտառային և գյուղատնտեսական հողերի խոշոր տարածքների:
Լեհաստանը հասկացավ, որ պլանի իրականացումը, ամենայն հավանականությամբ, կունենա բնապահպանական և առողջապահական անդրսահմանային զգալի ազդեցություններ գերմանական տարածքում: Անդրսահմանային ՌԷԳ ընթացակարգի արդյունքում լեհական համապատասխան մարմինը գերմանական հասարակության կողմից ստացել է 1 099 կարծիք և երկու պաշտոնական հայտարարություններ Բրենդենբուրգից և Սաքսոնիայից, որոնք ներառում էին քաղաքապետարանների և գերմանական այլ շահագրգիռ մարմինների կարծիքներ: Ընդունված ծրագիրը ներառում է նաև ամփոփ տեղեկատվություն, թե ինչպես են Գերմանիայի մեկնաբանությունները և առաջարկությունները հաշվի առնվել, և որքանով են դրանք կիրառվել: Գերմանիան լիովին բավարարված էր ՌԷԳ փաստաթղթով և այլ հարցեր ու մտահոգություններ չուներ:

ՄԱԿ ԵՏՀ օրինակներ՝ քաղաքաշինության զարգացման պլանավորումը՝ տարածաշրջանային մակարդակում, Գերմանիայի Բրանդենբուրգ և Սաքսոնիա հողերի սահմանակից Լյուբասսկի նահանգ, Լեհաստան, 16

ՌԷԳ-Ը ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ Է ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԷԳ-ը կարող է նպաստել երկրում տարբեր տնտեսական ոլորտների միջև առկա հնարավոր հակամարտությունների կանխարգելմանը՝ պլանավորման ամենավաղ փուլում ուսումնասիրելով նախագծի կամ ծրագրի փոխհարաբերությունները մյուս նախագծերի և ծրագրերի հետ և առաջարկելով այլընտրանքներ, որոնք կարող են օգնել՝ նմանատիպ հակամարտությունից խուսափելու համար:

ՕՐԻՆԱԿ 12

ՆՈՐՎԵԳԻԱ

Նորվեգիայի ջրային ռեսուրսների և էներգետիկայի տնօրինությունը (NVE) իրականացրել է ՌԷԳ ծովում քամու էներգիակայանի կառուցման համար: ՌԷԳ-ի նպատակը եղել է կառավարության համար հիմքեր ապահովել, որպեսզի վերջինս որոշի, թե նախապես ընտրված 15 գոտիներից որը պետք է բաց լինի լիցենզավորված հայտերի համար: ՌԷԳ-ը հիմնված էր շրջակա միջավայրի վրա ազդեցությունների, գործարար և հասարակական շահերի համապարփակ գնահատման, ինչպես նաև 15 գոտիներից յուրաքանչյուրի համար տեխնիկական և տնտեսական նպատակահարմարության նկարագրության վրա: Ընտրված և առաջարկված հինգ գոտիները հնարավորություն տվեցին կառուցելու ստորին ամրակայված կայանքներ և լողացող տուրբիններ: Այս հինգ գոտիներն առանձնանում էին լավ տեխնիկական-տնտեսական պայմաններով, մինչև 2025 թ. ցանցային միացման լավ հեռանկարներով, և համեմատ մյուս գոտիների ցածր ազդեցությամբ: Ակնկալվող ազդեցությունների թվում են շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, հակամարտությունը փաստացի և պոտենցիալ այլ ծովօգտագործողների հետ, ինչպիսիք են ձկնորսությունը, նավթի և գազի արդյունահանման ոլորտները, բացօթյա գործունեությունը, ինչպես նաև զբոսաշրջությունը:

Աղբյուրը՝ Ծովային ուսումնասիրությունների ինստիտուտ, Նորվեգիա

ՌԷԳ-Ը ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ Է:

ՌԷԳ-ը կարող է արդյունավետ գործիք լինել կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմացման համար՝ ներառելով կլիմայի փոփոխության նկատառումները զարգացման ծրագրերի նախագծման գործընթաց: Դա հատկապես օգտակար մեխանիզմ է տարածաշրջանային զարգացման, քաղաքային կամ պետական կամ հողօգտագործման պլանավորման համար նախատեսված նախագծերի և ծրագրերի մեջ կլիմայի փոփոխության ազդեցությունները ներառելու դեպքում:

ՌԷԳ-Ը ՍՏԵՂԾՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ ԵՎ ՕԳՆՈՒՄ Է ՆՎԱԶԵՑՆԵԼ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

ՌԷԳ համակարգի ներառումը և իրականացումը կստեղծ են աշխատատեղեր ինչպես պետական կառավարման, այնպես էլ մասնավոր հատվածի բնապահպանական և առողջապահական մասնագետների և փորձագետների համար: Շատ դեպքերում երկիրն ունի բավարար փորձառություն՝ շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատման համար: Այնուամենայնիվ, ՌԷԳ գործնական իրականացման համար երկրները նաև կարիք ունեն մասնագետների, ովքեր գիտեն, թե ինչպես պետք է կազմակերպել ՌԷԳ գործընթացները և ինչպիսի վերլուծական գործիքներ օգտագործել յուրաքանչյուր որոշակի ոլորտի համար:
ՄԱԿ ԵՏՀ քարտուղարությունն Արձանագրության շրջանակներում ՌԷԳ համակարգերի ստեղծման և իրականացման գործում ձգտում է ապահովել երկրներին օրենսդրական խորհրդատվությամբ և տեխնիկական օժանդակությամբ՝ միևնույն ժամանակ նպատակ ունենալով ներգրավել Արձանագրության ավելի շատ Կողմեր: ՌԷԳ-ի կարողությունների զարգացման լավագույն միջոցն այն գործնականում կիրառելն է: Այդ նպատակով կազմակերպվում են փորձնական ՌԷԳ-եր և վերապատրաստման դասընթացներ: Հիմնական թիրախային խմբերը պետական մարմիններն են, բնապահպանական ինստիտուտները, փորձագետները և ՌԷԳ իրականացման գործընթաց ներգրավված անձինք:

ՕՐԻՆԱԿ 13

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ

Ջրի կառավարումը միշտ կարևոր է եղել Նիդեռլանդների սոցիալ-տնտեսական զարգացման համար, քանի որ երկրի 25% -ը և բնակչության կեսն ապրում են ծովի մակարդակից ցածր: 2010թ. սկզբից «Գետի համար սենյակ» հոլանդական կառավարական ծրագիրն աշխատում էր, որպեսզի կլիմայի փոփոխության հետևանքով ջրի բարձր մակարդակից պաշտպանի Ռեյն /Rhine River/ գետի ավազանի մոտ բնակվող մոտ երկու միլիոն բնակիչների: Ծրագիրը նպատակաուղղված է առաջիկա տասնամյակների ընթացքում գետի ազատ հոսքի համար լրացուցիչ տարածություն տրամադրելուն ուղղված միջոցառումներ առաջարկել, պահպանել ջրհեղեղներից պաշտպանվելու մակարդակը, բարելավել գետավազանային միջավայրի որակը, ուժեղացնել գետերի՝ որպես էկոլոգիական միջանցքի գործառույթները:
«Գետի համար սենյակ» հոլանդական կառավարական ծրագրի ՌԷԳ-ը օգնեց.

– մոտավորապես 30 տեղանքի համար այլընտրանք գտնել,

– համեմատել այդ այլընտրանքների դրական և բացասական կողմերը,

– հնտրել նախընտրելի այլընտրանքներ՝ խորհրդակցելով ազդակիր բնակչության և կազմակերպությունների հետ,

– տեղեկացնել կողմերի միջև անհրաժեշտ փոխզիջումների վերաբերյալ բանավեճերի մասին:

ՌԷԳ-ը ներկայացրեց ինտեգրված մոտեցում՝ կլիմայի փոփոխություններին հարմարվողականության այլընտրանքների սոցիալական և տնտեսական ծախսերը և օգուտները ցուցադրելու համար, և ապահովեց որոշումների ընդունման մասնակցային մոտեցում՝ ձեռք բերելով հասարակական աջակցությունն ապագա ծրագրերի համար մասնավորապես այն վայրերում, որտեղ բնակիչները պետք է վերաբնակվեին:

Աղբյուրը՝ «Գետի համար հոլանդական սենյակ» ծրագիր

07 ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՆԱԼ ՌԷԳ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Արձանագրությունը բաց է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ-պետությունների համար: Պարտադիր չէ, որ Արձանագրությանը միանալու համար պետությունը հանդիսանա Էսպո Կոնվենցիայի կողմ:
Արձանագրության կիրարկմանը պատրաստվելու համար կառավարությունը պետք է իրականացնի անհրաժեշտ օրենսդրական, ընթացակարգային և այլ համապատասխան միջոցներ՝ արձանագրության դրույթները հստակ, թափանցիկ շրջանակներում կիրառելու համար:
Արձանագրության կողմ դառնալու համար Արձանագրությունը ստորագրող պետությունը վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթ է ներկայացնում Նյու Յորք՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: Այլ դեպքերում միանալու վերաբերյալ փաստաթուղթը պետք է հանձնվի պահման: Արձանագրությանը միանալու այս ընթացակարգը նույնն է Միավորված ազգերի բոլոր անդամների համար, անկախ ՄԱԿ-ի՝ ԵՏՀ անդամ լինելու փաստից:

07 ՀԱՐՑ

Արդյո՞ք ավելի լավ է իրականացնել ՌԷԳ՝ առանց ՌԷԳ Արձանագրությանը միանալու:

ՊԱՏԱՍԽԱՆ

Զարգացնելով ՌԷԳ ազգային համակարգն առանց ՌԷԳ- ի Արձանագրության միանալու՝ երկիրը կորցնում է բազմաթիվ առավելություններից օգտվելու մի շարք հնարավորություններ: ՌԷԳ-ի մասին Արձանագրությունը ստեղծում է միասնական իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ, որի համաձայն՝ Կողմերը և շահառուները փոխադարձաբար աջակցում են միմյանց՝ միասին աշխատելով բնապահպանական և առողջապահական բնագավառների պաշտպանվածության ուղղությամբ: Արձանագրության ղեկավար և ենթակա մարմինների հանդիպումները հարթակ են ապահովում Կողմերի միջև տեղեկատվության և փորձի փոխանակման ցանցի ստեղծման համար: Արձանագրության իրականացման վերաբերյալ Կողմերի հերթական հաշվետվությունը օգտակար տեղեկատվական նյութ է: Պայմանագրի մարմինները և քարտուղարությունը խորհրդատվական ծառայություններ են մատուցում, իսկ Իրականացման կոմիտեին կարելի է դիմել աջակցության համար կամ որևէ այլ Կողմի՝ Արձանագրության շրջանակներում պարտավորությունների կատարման վերաբերյալ մտահոգությունների մասին: Արձանագրության ներքո գործող ծրագրերը նաև հնարավորություն են ընձեռնում դոնորների կողմից ֆինանսավորվող կարողությունների զարգացման համար, այդ թվում պիլոտային ծրագրերը կամ ՌԷԳ կիրառման վերապատրաստման դասընթացները:

Արձանագրությունը հիմնված է նոու-հաու և ՄԱԿ ԵՏՀ փորձի վրա, որոնց արդյունավետությունն ապացուցված է: ՌԷԳ ընթացակարգի արդյունքում ստացված համատեղ ստանդարտներն արդյունավետ և միասնական համակարգ են ստեղծում, որը նպաստում է գործընկեր երկրների միջև տեղեկատվության փոխանակմանը և հաղորդակցմանը: Նման հուսալիությունը նպաստավոր է ներդրումների համար, իսկ միջազգային ֆինանսական կառույցներից վարկեր և դրամաշնորհներ ստանալու համար հաճախ պահանջվում է ՌԷԳ միջազգային ստանդարտի համապատասխանությունը:

Անհատական ՌԷԳ շրջանակներ որդեգրած երկիրը կարող է համապատասխանել Արձանագրությունների դրույթներին՝ չհանդիսանալով Արձանագրության Կողմ և իրավունք չունենալով օգտվել վերջինիս տրամադրած հնարավորություններից: Դառնալով Արձանագրության Կողմ՝ երկիրը հավաստում է իր հանձնառությունը ՌԷԳ միջազգայնորեն ճանաչված չափանիշների նկատմամբ, ինչպես նաև իր աջակցությունն է ցուցաբերում բնապահպանական ժողովրդավարության և արդյունավետ կառավարման սկզբունքներին:

ՌԷԳ-ի մասին արձանագրությունը համահունչ է ԵՄ համապատասխան օրենսդրությանը: Հետևաբար՝ ՌԷԳ օրենսդրությունը, ՌԷԳ Արձանագրության համաձայն, օգնում է այն երկրներին, որոնք ունեն կամ նախատեսում են Եվրոպական միության հետ կնքել Ասոցացման համաձայնագիր:

Էսպո Կոնվենցիայի կազմակերպչական կառուցվածքը



07 ՀԱՐՑ

Արդյո՞ք Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար բավարար է ընդլայնել նախագծերի և ծրագրերի համար ներկայումս կիրառվող ԾՄԱԳ փորձառնական համակարգերը՝ ՌԷԳ Արձանագրությանը համապատասխանելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ

Ավանդական ԾՄԱԳ / Պետական էկոլոգիական փորձաքննությունների համակարգերը չեն համապատասխանում ՌԷԳ միջազգային չափանիշներին և խոչընդոտում են ՌԷԳ Արձանագրության արդյունավետ իրականացումը: Այս համակարգերը հայեցակարգային տարբերություններ ունեն: ԾՄԱԳ համակարգի շրջանակներում բնապահպանական գնահատումը կենտրոնացած է ազգային տեխնիկական բնապահպանական չափանիշներին համապատասխանության վրա, մինչդեռ այդ ստանդարտների միջոցով հստակ չկարգավորվող խնդիրները գնահատման շրջանակից դուրս են մնում: ՌԷԳ համակարգի շրջանակներում իրականացվող բնապահպանական գնահատումը կանխարգելիչ բնույթ ունի և պահանջում է, որպեսզի հաշվի առնվեն էական ազդեցությունները (նույնիսկ եթե դրանք ներառված չեն բնապահպանական ազգային չափանիշներ), ինչպես նաև մշակվեն այլընտրանքներ և ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ: Որպես հավելում նշենք, որ ԾՄԱԳ / ՊԷՓ համակարգի ներքո նախագծերի և ծրագրերի բնապահպանական գնահատումն իրականացվում է բնապահպանական մարմինների կողմից, իսկ ՌԷԳ-ն իրականացնում են տվյալ նախագծի կամ ծրագրի մշակման համար պատասխանատու մարմինները:

Աղբյուրը՝ ՄԱԿ ԵՏՀ. Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ)կիրառման վերաբերյալ իրավական և ինստիտուցիոնալ կառույցների բարեփոխման գործնական ուղեցույց (2016)

	ՌԷԳ	ՇՄԱԳ/ ՊԷՓ *
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	✓	✗
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ	✓	✗
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ	✓	✗
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	✓	✗
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	✓	✗ Միայն նախնական նախագծի կամ ծրագրի վրա հիմնված
ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	✓	✗ ՊԷՓ կամ բնապահպանական և առողջապահական մարմինների կողմից հաստատում
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՆԱԽԱԳԻԾ ԿԱՄ ԾՐԱԳԻՐ	✓	✗
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	✓	✗

*ՊԷՓ- Պետական էկոլոգիական փորձաքննություն

1. Ռազմավարական Էկոլոգիական Գնահատման արձանագրություն. Անդրսահմանային համատեքստում Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման Կոնվենցիա. ՄԱԿ. Հասանելի է՝ http://www.unece.org/fileadmin/DAM/env/eia/documents/legaltexts/protocolenglish.pdf

2. Հասանելի է՝ http://www.unece.org/index.php?id=27379

3. Հասանելի է՝ http://www.unece.org/index.php?id=30823

4. Եվրոպական հանձնաժողովի և խորհրդի 2001թ. հունիսի 27-ի 2001/42/EC դիրեկտիվ

5. Հասանելի է՝ https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=XXVII-4-b&chapter=27&lang=en

6. Արևելյան Եվրոպա – Բելառուս, Մոլդովայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա: Կովկաս -Հայաստան, Ադրբեջան, Վրաստան: Կենտրոնական Ասիա - Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան

7. Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին հայտարարություն»

8. Արձանագրության մեջ նշվում է, որ «նախագծեր և ծրագրեր» հասկացությունը ներառում է այն նախագծերն և ծրագրերը (և դրանց բովանդակության մեջ կատարվող փոփոխությունները), որոնք պահանջում են օրենսդրական, կարգավորիչ կամ վարչական ընթացակարգեր, որոնք ենթակա են իրավասություն ունեցող մարմնի կողմից նախապատրաստման և (կամ) հաստատման, կամ որդեգրման, ներկայացվում է լիազոր մարմնի կողմից պաշտոնական կարգով, խորհրդարանի կամ կառավարության կողմից ընդունմանը (հոդված 2.5)

9. Հասանելի է՝ http://www.unece.org/fileadmin/DAM/env/eia/meetings/2015/Jan_seminar_Moscow._Russia_EIA_and_SEA/SEA_elements.pdf

10. Հասանելի է՝ http://www.unece.org/fileadmin/DAM/env/eia/Publications/2015/ECE.MP.EIA.SEA._REVTA_TYPO3_ENG.pdf

11. Հասանելի է՝ http://www.unece.org/fileadmin/DAM/env/eia/Publications/2015/ECE.MP.EIA.SEA._REVTA_TYPO3_ENG.pdf

12. Հասանելի է՝ http://www.unece.org/fileadmin/DAM/env/eia/Publications/2015/ECE.MP.EIA.SEA._REVTA_TYPO3_ENG.pdf

13. Հասանելի է՝ http://www.unece.org/index.php?id=27379

14. Հասանելի է՝ http://ec.europa.eu/environment/archives/eia/eia-studies-and-reports/eia-costs-benefit-en.htm

15. Հասանելի է՝ https://www.unece.org/fileadmin/DAM/env/eia/documents/mop6/2_Fact_Sheet_Study_Case_on_SEA_long_version.pdf

16. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Կոնվենցիայի Կողմերի առաջին հանդիպումը անդրսահմանային համատեքստում, որը հանդիսանում է որպես ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության կողմերի հանդիպում, Ժնեւ, 20 հունիսի, 2011 թ. http://www.unece.org/fileadmin/DAM/env/documents/2011/eia/sea/ece.mp.eia.sea.2011.L.3.e.pdf

17. Հասանելի է 12/02/2016-ից՝՝[https://www. ruimtevoorderivier.nl/english/]

Հապավումներ

CO	Ածխածնի երկօքսիդ
EaP	Եվրոպական միություն Արևելյան գործընկերություն
EaP Green: Greening Economies	Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում
EIA	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում/ՇՄԱԳ/
Էսպո Կոնվենցիա	ՄԱԿ ԵՏՀ Անդրսահմանային համատեքստում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Կոնվենցիա
GIS	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
NOx	Ազոտային օքսիդներ
OECD	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՇՄԱԳ	Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին հայտարարություն»
SCP	Կայուն սպառում և արտադրություն
ՌԷԳ	Ռազմավարական էկոլոգիական գնահատում
ՊԷՓ	Պետական էկոլոգիական փորձաքննություն
Sox	Ծծմբի օքսիդներ
UNECE	Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով /ՄԱԿ ԵՏՀ/
UNEP	ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր
UNIDO	ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն

ՄԱԿ ԵՏՀ Էսպո Կոնվենցիայի Քարտուղարություն

ՌԷԳ Արձանագրություն

Convention and its Protocol on SEA

Հեռ: +41 22 917 1723

Ֆաքս: +41 22 917 0107

Էլեկտրոնային հասցե: eia.conv@unece.org

Էլեկտրոնային կայք: www.unece.org/env/eia

ՌԱՁՄԱԿԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏԱՆ ՍՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓԱՍԵՐ ԵՎ ՍՈՒԱԿԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

EaPGREEN Partnership for Environment and Growth

This project is funded by the EU

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES

UNECE

UNEP

UNIDO

Information Service
United Nations Economic Commission for Europe

Palais des Nations
CH - 1211 Geneva 10, Switzerland
Telephone: +41(0)22 917 44 44
Fax: +41(0)22 917 05 05
E-mail: info.ece@unece.org
Website: http://www.unece.org